

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Հիփոթեքային վարկերի մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

22/03/2023թ.

07/04/2023թ.

Անորոշ` 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Հիփոթեքային վարկերի մասնագետ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդներին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համապատասխան խորհրդատվության/տեղեկատվության տրամադրում,
- Նոր հաճախորդների ներգրավում, ներկա և պոտենցիալ հաճախորդների հետ ակտիվ համագործակցություն,
- Հաճախորդների հետ համապատասխան պայմանագրերի կնքում, պայմանագրի դադարեցում, փոփոխություն,
- Հաճախորդների համար առավել/նվազ բարենպաստ՝ արտոնյալ պայմանների հաստատման գործընթացի իրականացում (նոր սակագին, և այլն),
- ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ,
- Վարկերի/վարկային գծերի պայմանագրերի և անհատական թերթիկների Բանկի անունից ստորագրում,
- Իրենց կողմից բացված ընթացիկ, խնայողական, քարտային հաշիվների բացման պայմանագրերի (օֆերտան, ակցեպտը) Բանկի անունից ստորագրում,
- Իրենց կողմից տրամադրված անհատական պահատույթների վարձակալության պայմանագրերի և ապահովագրական վկայագրերի Բանկի անունից ստորագրում,
- Արտարժույթի անկանխիկ առք ու վաճառքի իրականացում,
- Վարկային գործառնությունների իրականացում այդ թվում.
 - Հիփոթեքային վարկերի և այլ վարկային հայտերի ընդունում,
 - Հիփոթեքային վարկերի և այլ վարկային հայտերի ընթացքի ապահովում,
 - Հիփոթեքային վարկերի և այլ վարկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրում,
 - Հիփոթեքային վարկերի և այլ վարկերի տրամադրման գործընթացի իրականացում, վարկի գումարի տրամադրում, , վարկային գործի կազմում, թարմացում,
 - Վարկի մարումներին հետևում, վարկառուներին հիշեցում,
 - ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ:
 - Բանկային հաշիվների բացում և սպասարկում,
- Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված գործառնությունների իրականացում,

- Անհատական պահատեղերի վարձակալության պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, պահատուփային ծառայության մասով հաճախորդների սպասարկում (հաճախորդի ուղեկցում, և այլն), Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում,
- Հաճախորդներին հեռակառավարման համակարգերի տրամադրում, համապատասխան պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, դրանց հետ կապված և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում,
- Հաճախորդներին իրենց հաշիվների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, վճարային փաստաթղթերի, դրանց կրկնօրինակների և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթերի տրամադրում,
Պետական մարմինների սպասարկման գրասենյակների գործառնությունների իրականացում,
- Ապահովագրական պայմանագրերի կնքում, հաճախորդներին պոլիսների տրամադրում,
- Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վաճառքի իրականացում և սահմանված պլանի կատարում. որի արդյունքում մասնագետը ստանում է ամսական պարգևավճար՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
- Հաճախորդներին աջակցություն Բանկի քարտերի ակտիվացման, մոբայլ հավելվածներում սինքրոնացման հարցերում,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ,
- Ապահովագրություն
- Կառավարիչի կողմից տրված հանձնարարականների կատարում:
- Բանկում սահմանված կարգապահական կանոնների խախտման և իր պաշտոնեական պարտականությունների չկատարման համար պատասխանատվության կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված պահանջների իրականացման հսկողություն և պահպանում,
- Իրեն վստահված Բանկի գույքի նպատակային և միայն ծառայողական նպատակներով շահագործում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվության կրում,
- Բանկում սահմանված ներքին, կարգապահական աշխատանքային ռեժիմի և գործարար էթիկայի կանոնների պահպանում, աշխատողների արտաքին տեսքի և գործարար ոճի վերաբերյալ միասնական ստանդարտների պահպանում, ղեկավարության կողմից իրեն տրված հանձնարարականների ճիշտ և ժամանակին կատարում:

ՊԱՅԱՆՔԿՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Ֆինանսաբանկային ոլորտում առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
- Լեզուների իմացություն՝ Հայերեն, անգլերեն, ռուսերեն /ցանկալի է նաև այլ լեզուների իմացությունը/ լեզուների ազատ և անկաշկանդ տիրապետում

- Համակարգչային գիտելիքներ
- Հաղորդակցման հմտություններ
- Վաճառքի հմտություններ
- Կատարողական ցուցանիշների ապահովման ունակություն
- Ընդհանուր զարգացվածություն և հետաքրքրասիրություն
- Թվային մտածողություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Կազմակերպչական հմտություններ
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրութների նկատմամբ ուշադրություն / լարված գրաֆիկով աշխատելու կարողություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարզևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«Այդի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն Նորար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: